

Սկաուտական Տողանցք Հայոց Նոր Տարւոյ Առթիւ

13 Յունուար 2006
Երուսաղէմ

Անգամ մը եւս Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտ թմբկահարները, հակառակ երեկոյեան ահռելի ցուրտին, սկաուտական կանոնաւոր տարազներով, դուրս եկան տողանցելու Հայոց թաղի թէ վանքի շրջանը, ակետելով բոլորին Նոր տարւոյ բոլորունը:

Սկաուտներու կոկիկ ու սիրուն խմբակը դուրս եկաւ վանքի մայր դարպասէն ու դէպի ձախ դիմելով տողանցեց մինչեւ «Նոր Շէնք» ինքնաշարժերու երթելէկը կասեցնելով ամբողջ ժամ մը ի հեճուկս Հրեայ դրացիներու թէ ոստիկաններու ոչ այնքան բարեացակամ մայրաւածքներուն:

Սկաուտներու թմբուկներու ժխորը արձագանգեց հայոց թաղի ամէնէն խուլ անկիւնը մինչ Երուսաղէմացի Հայ Բարեսիրական Միութեան անդամները ձգելով Նոր Տարուայ առթիւ իրենց կազմակերպած սիրոյ սեղանը, դուրս եկան դիմաւորելու Հ.Մ.Ը.Մ.ի խրոխտ սկաուտները, որոնք անխռով իրենց ընթացքը շարունակեցին մինչեւ մայրավանք ուր Մեծ Բակի մէջ տպաւորիչ ներկայացում մը հրամցնելէ ետք աճապարեցին ակունք՝ Հ.Մ.Ը.Մ.ի ակունք:



Յաւելեալ նկարներ Անգլերէն բաժնին մէջ: